«ՇԻՐԱԿԱՑՈՒ ՃԵՄԱՐԱՆ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԲԱՑ ՕԼԻՄՊԻԱԴԱ

2022-2023 ՈՒՍՏԱՐԻ

7-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Հայոց լեզու

Արքայական խոսքը մեր կմնա հավետ...

Վահան Տերյան

Կարդա՛ առակը:

Ըստ Լեոնարդո դա Վինչիի

Մինչ սոխակի աղվամազիկ ձագերը, միմյանց սեղմված և իրար գրկած, անխռով քնած էին, նրանց հոգածու ծնողները թռան գնացին կեր հայթայթելու: Այդ տեսնելով՝ իժն զգուշորեն իր թաքստոցից դուրս սողաց դեպի թռչնակների բույնը՝ մտովի ճաշակելով դյուրին ձեռք գցած ավարը:

Բայց մայր սոխակն արդեն տուն էր շտապում՝ որդը կտուցին: Ճիշտ ժամանակին նկատելով չարագործին՝ մայրը սրտապատառ ծղրտաց.

– Կա՛նգ առ, գթա՛ իմ անմեղ ձագուկներին: Փոխարենը ես քեզ համար ախորժալուր և սրտառուչ մի երգ կերգեմ, որի նմանը երբևէ լսած չես լինի...

Եվ նա գեղգեղաց քաղցրակարկաչ, դայլայլեց ու սուլեց: Անտառով մեկ տարածվեցին քնքուշ ու կախարդիչ դայլայլի ելևէջները...

1. Մեկ նախադասությամբ ավարտի՛ր առակը **(1** միավոր**):**

_____

_____

_____

_____

_____

2. Վերնագրի՛ր առակը**,** բացատրի՛ր**,** թե ինչո՛ւ ես այդ վերնագիրն առաջարկում

(2 միավոր**):**

_____

_____

_____

----

3. Տեքստում գտի՛ր և տրված բառերի կողքին գրի՛ր համապատասխան հոմանիշները **(2 միավոր):**

Ճարել----------------հայթայթել-------------------------------------
----

Ըմբոշխնել----------ճաշակել---------------------------------------
----

Աղեկտուր-----------սրտապատառ---------------------------------------
----

Հոգեհմա---------------սրտառուչ-------------------------------------
----

4. Տեքստի ո՞ր բառերն են հականիշ տրվածներին **(2 միավոր):**

Վրդովված-------------անխռով--

Խրթին-------------------դյուրին-------------------------------------
----

Բարյացակամ----------չարագործ--

Կոպիտ-------------------քնքուշ---
----

5. Տեքստում գտի՛ր և դո՛ւրս գրիր տրված կաղապարներին համապատասխան բառերը **(2 միավոր):**

Արմատ+ածանց+ածանց---------------թռչուն---------------------------
----

Արմատ+ա+արմատ+ածանց----------------աղվամազիկ ---------------------

Արմատ+արմատ+ածանց------------------սրտառուչ---------------------------
----

Արմատ+ածանց+արմատ----------------եղևէջ-----------------------------
----

6. Տեքստում գտի՛ր թիռ, ծին, առ, է արմատն ունեցող բառերը, դո՛ւրս գրիր, ընդգծի՛ր համապատասխան արմատը(2 միավոր):

թռչուն-----թիռ--

ծնող

ծին--

սրտառուչ--առ---

երբևէ-------է--
----

7. Տեքստում գտի՛ր և դո՛ւրս գրիր դերբայները, նշի՛ր դրանց անունները (4 միավոր):

Սեղմված, գրկած, քնած, լսած, ձեռք զգած – հարակատար դերբայ-----------------հայթայթելու, տեսնելով, նաճակելով, նկատելով – անորոշ դերբայ

8. Պատկերացրո՛ւ, որ այս առակի օձը կարողանում է մարդկային լեզվով խոսել: Գրի՛ր նրա մենախոսությունը այս դեպքի առիթով (5 միավոր):

Գնահատման սանդղակ

Միավոր	Նկարագրություն
5	1. Դրսևորել է երևակայություն և պատկերավոր մտածողություն: 2. Մենախոսությունն ունի սկիզբ և տրամաբանական ավարտ: 3. Բառապաշարը հարուստ է, բառերը կիրառել է տեղին և բովանդակությանը համապատասխան: 4. Ուղղագրական, կետադրական, քերականական սխալներ և վրիպակներ չկան:
4	1. Մասամբ դրսևորել է երևակայություն և պատկերավոր մտածողություն: 2. Մենախոսությունն ունի սկիզբ և տրամաբանական ավարտ: 3. Բառապաշարը հարուստ չէ, 1-2 տեղում բառերի սխալ կիրառություն կա: 4. Ուղղագրական, կետադրական, քերականական 2-3 սխալներ և վրիպակներ կան:
2-3	1. Չի դրսևորել երևակայություն և պատկերավոր մտածողություն: 2. Մենախոսությունը չունի համապատասխան սկիզբ և տրամաբանական ավարտ: 3. Բառապաշարն աղքատիկ է, 2-3 տեղում բառերի սխալ կիրառություն կա: 4. Ուղղագրական, կետադրական, քերականական 4-5 սխալներ և վրիպակներ կան:
1	Շարադրանք գրել է, որը մենախոսություն չէ:

0	Առաջադրանքը չի կատարել: